ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի հիմնադիր ժողովի 03/03/2008թ.-ի թիվ 1 որոշմամբ
Փոփոխված է «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 10.04.2010թ. թիվ 6 որոշմամբ
Փոփոխված է «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 16.04.2012թ. թիվ 10 որոշմամբ
Փոփոխված է «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 01.04.2016թ. թիվ 17
Փոփոխված է «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 30.06.2025թ.-ի թիվ 2025-3-2 Լ որոշմամբ
Փոփոխված է «Նեո Կրեդիտ» ՎԿ ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 27.10.2025թ.-ի թիվ 2025-4-2 Լ որոշմամբ

(«Նեո Կրեդիտ» ՎԿ ՓԲԸ Խորհրդի նախագահ
Բորիս Ստեփանյան)

(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

(ստորագրություն)

Digitally signed by Martin Galstyan
Date: 2025.12.25 15:45:13 AMT
Reason: Գրանցած է 24.12.2025թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՆԵՈ ԿՐԵԴԻՏ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

Georgi Mnatsakanyan

Digitally signed by Georgi Mnatsakanyan
Date: 2025.10.27 18:42:29 +04'00'

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՆԵՈ Կրեդիտ» Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ «**Ընկերություն**») (մինչև անվանափոխությունը՝ «ՅՈՒՆԻԼԻԶԻՆԳ» Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների 03.03.2008թ. որոշմամբ և հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն, որի գլխամասային գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, քաղաք Երևանում:

1.2. Ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետական գրանցում և լիցենզիա ստանալու պահից:

1.3. Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, Քաղաքացիական օրենսգրքով, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական և այլ ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով:

1.4. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով), դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացման այլ վավերապայմաններ:

1.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.6. Ընկերությունն ունի առանձնացված գույք և ակտիվներ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.7. Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, եթե վերջիններիս անունից հանդես եկող պետական մարմինները դրանք չեն ստանձնել որպես երրորդ անձ կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՆԵՈ Կրեդիտ» Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «ՆԵՈ Կրեդիտ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество Кредитная организация “НЕО Кредит”

կրճատ՝ ЗАО Кредитная Организация “НЕО Кредит”

անգլերեն լրիվ՝ “NEO Credit” Credit Organization Closed Joint Stock Company

կրճատ՝ “NEO Credit” Credit Organization CJSC

1.10. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է ՀՀ, ք.Երևան, Վ.Վաղարշյան փողոց 24 շենք, 41 ոչ բնակելի տարածք:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

2.1. Ընկերության նպատակը միջին և երկարաժամկետ ֆինանսավորման միջոցով շահույթի ստացումն է:

2.2. Ընկերությունը լիզինգային վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, այդ թվում՝

ա) ներգրավել փոխառություններ եւ (կամ) կնքել նմանատիպ գործարքներ.

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ.

գ) տրամադրել երաշխիքներ.

դ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել արժեթղթեր կատարել նման այլ գործառնություններ.

գ) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.

ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական).

զ) գնել, վաճառել եւ կառավարել բանկային ոսկի եւ ստանդարտացված ձուլակտորներ եւ մետաղադրամ.

է) գնել եւ վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի եւ արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ եւ նման այլ գործարքներ.

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր եւ այլ արժեքներ.

ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

ժա) ստեղծել եւ սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

ժբ) իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ:

2.3. Սույն կետի «թ» ենթակետով նախատեսված գործունեությամբ Ընկերությունը կարող է զբաղվել իր գործունեության վայրի նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տեխնիկական բավարարվածության պահանջներն ապահովելուց հետո:

2.4. Ընկերությունը կարող է տրամադրել ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած տեսակի վարկեր:

2.5. Ընկերությունն իրավունք ունի փոխառություններ ներգրավել և/կամ նմանատիպ գործարքներ կնքել բացառապես իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և իր մասնակցների հետ:

2.6. Ընկերությունը կարող է կնքել ցանկացած քաղաքացիաիրավական գործարք, որն անհրաժեշտ է կամ նպատահարմար իր գործունեությունն իրականացնելու համար:

2.7. Ընկերությանն արգելվում է իրականացնել արտադրական, առևտրային կամ լիցենզավորման ենթակա այլ գործունեություն:
2.8. Ընկերությունն ինքն է որոշում իր կողմից մատուցվող ծառայությունների սակագները:
2.9. Ընկերության և հաճախորդների միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրերով, այդ թվում հրապարակային օֆերտաներով և անհատական պայմանագրերով:
2.10. Ընկերությունը չի ներգրավում փոխառություններ հրապարակային օֆերտաների միջոցով:
2.11. Ընկերությունն օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններն իրականացնում է անկանխիկ ձևով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

3.1. Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում կարող է բացել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում հաշվառման պահից: Օտարերկրյա պետություններում Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են տվյալ պետության օրենսդրությանը և/կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:
3.2. Ընկերության տարածքային ստորաբաժանումները գործում են Ընկերության Խորհրդի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:
3.3. Ընկերության տարածքային ստորաբաժանումների հաշվառումը և լուծարումն իրականացվում են օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
3.4. Մասնաճյուղը Ընկերության անունից իրականացնում է գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ, ինչպես նաև ներկայացուցչական ֆունկցիա:
3.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը՝ առանց ֆինանսական գործառնություններ իրականացնելու:
3.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Ընկերության հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:
3.7. Ընկերության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են Ընկերության կողմից երեք տարուց ոչ ավելի ժամկետով տրված լիազորագրի հիման վրա:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1. Ընկերության գույքը և ակտիվները նրան են պատկանում սեփականության իրավունքով:
4.2. Ընկերությունն իրավունք ունի իրեն պատկանող գույքը վաճառել կամ փոխանցել այլ ընկերությունների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց, փոխանակել այն, վարձակալության տալ, տրամադրել անհատույց օգտագործման, ինչպես նաև դուրս գրել սահմանված կարգով:
4.3. Ընկերության դրամական միջոցները պահվում են բանկերում սահմանված կարգով բացված հաշվարկային և այլ հաշիվներում:
4.4. Ընկերության գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո: Ընկերության հիմնական և շրջանառու միջոցների առգրավում չի թույլատրվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4.5. Պետական մարմինների, իրավաբանական անձանց և քաղաքացիների կողմից Ընկերությանը հասցված վնասը ենթակա է փոխհատուցման դատական կարգով:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ներդրումների հաշվին և կազմում է 150 000 000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) հայկական դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է տեղաբաշխված 15000 (տասնհինգ հազար) սովորական բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10000 (տաս հազար) հայկական դրամ անվանական արժեքով:

5.2. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է Ընկերության Պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չի կարող պակաս լինել ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանված չափից:

5.3. Պետական գրանցման պահին Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխված են փակ բաժանորդագրության միջոցով, լրիվ վճարված են և պատկանում են բաժնետերերին:

5.4. Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիան:

5.5. Ընկերությունն իրավունք ունի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը, եթե նախկինում թողարկված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:

5.6. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է ավելացվել նաև.

ա/ Ընկերության բաժնետերերի կողմից դրամական միջոցների լրացուցիչ ներդրումների հաշվին.

բ/ երրորդ անձանց կողմից լրացուցիչ ներդրումների հաշվին.

գ/ չբաշխված շահույթի հաշվին:

5.7. Ընկերությունն իր՝ աուդիտի ենթարկված ֆինանսական արդյունքներն անփոփելուց հետո կարող է շահույթի մի մասը ներդնել իր կանոնադրական կապիտալում՝ բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

5.8. Ընկերության բաժնետերերի կամ երրորդ անձանց բաժնետոմսերի բաժանորդագրության հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը ընդունվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից, որով սահմանվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները:

5.9. Ընկերության բաժնետերերը ունեն այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

5.10. Նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 30 օր, սկսած բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից, որը կատարվում է մնացած բաժնետերերին գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով:

5.11. Նախատեսված ժամկետում բաժնետերերի կողմից իրենց նախապատվության իրավունքից չօգտվելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով:

5.12. Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի:

5.13. Ընկերությունը կարող է հետագայում թողարկել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել կանոնադրական կապիտալի 25%-ը: Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահաբաժնի չափը որոշվում է Ժողովի կողմից՝ ֆինանսական տարվա /հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը/ ավարտից հետո՝ ելնելով Ընկերության ֆինանսական ցուցանիշներից:

5.14. Կանոնադրական հիմնադրամի նվազեցումը կարող է կատարվել՝

ա) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.

բ) բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

5.15. Կանոնադրական հիմնադրամի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերության առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է: Եթե ձեռքբերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

5.16. Կանոնադրական հիմնադրամի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում Ընկերությունը գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին:

5.17. Ընկերության զուտ ակտիվների արժեքը Ընկերության կանոնադրական հիմնադրամի չափից նվազելու հիմքով Ընկերության կանոնադրական հիմնադրամի նվազեցումը կատարվում է բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքի համամասնորեն պակասեցման ձևով՝ առանց բաժնետերերին որևէ հատուցման:

5.18. Ընկերությունում պարտադիր կարգով ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Եթե պահուստային հիմնադրամի միջոցները պակասում են Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ի չափից, ապա Ընկերությունը այն համալրում է իր շահույթի 5%-ի չափով մասհանումներից:

5.19. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության Խորհրդի որոշմամբ՝ ընկերության կրած կորուստները, վնասները ծածկելու, տեղաբաշխված բաժնետոմսերը ետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամի միջոցների օգտագործումը այլ նպատակներով չի թույլատրվում:

5.20. Ընկերությունն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման ֆոնդեր (պահուստաֆոնդեր):

5.21. Հիմնադրամների ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Խորհրդի կողմից: Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստել Ընկերության տնտեսական զարգացմանը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ընկերության բաժնետերերը պարտավոր են.

- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկությունները,
- սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով կատարել դրամական ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում:

6.2. Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի.

- մասնակցել Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ իրեն պատկանող բաժնետոմսերի չափով՝ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- օգտվել Ընկերության կողմից տեղաբաշվող բաժնետոմսերի ձեռքբերման իրենց նախապատվության իրավունքից,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, բացի գաղտնի փաստաթղթերից, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին,
- Ընկերության բաժնետերերը, որոնք Ընկերության կանոնադրական կապիտալում տիրապետում են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս 5%-ին, իրավունք ունեն ցանկացած ժամանակ պահանջել Ընկերության հաշվետվությունների, այդ թվում գաղտնի փաստաթղթերի ստուգման համար փորձագետի կամ փորձագետների խմբի հրավիրում: Ստուգման հետ կապված ծախսերը վճարում է ստուգումը պահանջող կողմը,
- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովներին իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- հանդես գալ առաջարկություններով Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում,
- քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
- հայցով դիմել դատարան Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,
- ունենալ օրենքով ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ,
- Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերել նախապատվության իրավունքով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

7.1. Իր գործունեության ընթացքում Ընկերության ստացած շահույթը ենթակա է հարկման ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերությունը կարող է շահաբաժիններ վճարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկերը և պարտադիր այլ վճարումները կատարելուց հետո ձևավորվում է ընկերության տրամադրության տակ մնացած շահույթը, որի բաշխումն իրականացվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ՝ սույն կանոնադրությամբ սահմանված պահուստային հիմնադրամների համալրման, և շահաբաժինների վճարման նպատակով:

7.3. Ընկերության տարեկան շահաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը, որը սահմանում է վճարման կարգն ու պայմանները:
7.4. Ընկերության բաժնետերերին շահաբաժիններ վճարելն արգելվում է, եթե դրանց վճարման պահին ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին ընկերության առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1. Ընկերության կառավարման մարմիններն են.

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը, որն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է,
- Ընկերության Խորհուրդը, որը նշանակվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից,
- Ընկերության Գործադիր տնօրենը, որն ընկերության գործադիր մարմինն է:

8.1.1. Ընկերության Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովը գումարվում է ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում: Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովների հրավիրման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել 18 ամիսը: Ընկերության ֆինանսական տարի է համարվում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:
8.1.2. Ընկերության Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովից բացի գումարվող Բաժնետերերի Ընդհանուր Ժողովները, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար, համարվում են արտահերթ:
8.1.3. Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովները գումարվում են Ընկերության Տնօրենների խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Վերստուգիչ հանձնաժողովի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը նեկայացնելու դրությամբ ընկերության առնվազն 10% ձայնի իրավունք ունեցող սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
8.1.4. Բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համապատասխան ձայնի իրավունք: Բաժնետերը բաժնետերերի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
8.1.5. Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովն իրավասու է, եթե ժողովին ներկա են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50%-ից ավելիին տիրապետող բաժնետերերը կամ իրենց լիազոր ներկայացուցիչները:

8.1.6. Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի իրավասություններն են.

ա/ Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
բ/ Ընկերության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
գ/ Ընկերության լուծարման մասին որոշման ընդունումը,
դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
ե/ Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Բաժնետերերի Ընդհանուր տարեկան Ժողովում: Ընկերության Խորհրդի և Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների ընտրության հարցը Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների, ինչպես նաև խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ/ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

է/ Ընկերության և դրա մասնաճյուղերի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթի և վնասի բաշխման, տարեկան շահաբաժինների վճարման և դրանց չափի հաստատումը,

ը/ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի վարման կարգի և հաշվիչ հանձնաժողովի ձևավորման մասին որոշման ընդունումը,

թ/ Օրենքով սահմանված դեպքերում Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Ընկերության ակտիվների, հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),

ժ/ Ընկերության և ցանկացած Բաժնետիրոջ, փոխկապակցված անձանց միջև գործարքների կնքումը,

ի/ Ընկերության գործունեության կամ ռազմավարության էական փոփոխությունը,

լ/ Ընկերության Կանոնադրական Կապիտալի ավելացումը,

ծ/ Ընկերության Գործադիր տնօրենի նշանակումը:

8.1.7. Որոշումներն ընդունվում են Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում 8.1.6. կետի ա/, բ/, դ/, թ/, ժ/, ի/. լ/, խ/, ծ/ ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից Ժողովին մասնակցող Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 3/4-ով: Սույն կանոնադրության 8.1.6. կետի գ/ ենթակետով սահմանված հարցի շուրջ որոշումն ընդունվում է Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի կողմից Ժողովին մասնակցող Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերի ձայների 2/3-ից:

Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի նախապատրաստումը և վարումն իրականացվում է ըստ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի հաստատած կարգի:

8.1.8. Ժողովի գումարման մասին Խորհուրդը Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը ծանուցում է առնվազն 10 օր շուտ նրան պատվիրված նամակ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով: Ծանուցումը պետք է բովանդակի օրենքով սահմանված տեղեկություններ: Ժողովի գումարման մասին վերը նշված կարգով ծանուցվում են նաև օրենքով սահմանված դեպքերում խորհրդակցական ձայնի իրավունքով Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք:

8.1.9. Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն Կանոնադրության 8.1.6. կետի է/ ենթակետով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ:

8.1.10. Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի ավարտից հետո 15 օրվա ընթացքում 2 օրինակով կազմվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը պարունակում է ժողովում կայացած ելույթների ընդհանուր դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները: Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

8.2. Ընկերության Խորհուրդը.

8.2.1. Ընկերության Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը.

8.2.1.1. առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը,

8.2.2. Ընկերության Խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովում, 5 տարի ժամկետով, Ընկերության բաժնետերերի կողմից: Ընկերության Խորհրդի կազմում կարող են ընտրվել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձինք, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները, որոնք չեն կարող մեծամասնություն կազմել:

8.2.3. Ընկերության Խորհուրդը բաղկացած է 3 անդամներից:

8.2.4. Ընկերության այն բաժնետերերը, որոնք Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10-ից ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Ընկերության Խորհրդի կազմում կամ նշանակել իրենց ներկայացուցչին:

8.2.5. Ընկերության Խորհրդի բացառիկ իրավասություններն են.

ա/ Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

բ/ Օրենքով սահմանված կարգով ընկերության Բաժնետերերի տարեկան և արտահերթ Ընդհանուր Ժողովների հրավիրումը,

գ/ Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի օրակարգի հաստատումը,

դ/ Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու, ամսաթիվը հաստատելու, ինչպես նաև այն բոլոր հարցերը լուծելու, որոնք կապված են Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի նախապատրաստման և գումարման հետ և վերապահված են Ընկերության Խորհրդի իրավասությանը,

ե/ Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքի հաստատումը,

զ/ Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

է/ Ընկերության աուդիտի իրականացման կազմակերպումը և աուդիտ իրականացնող անձի ներկայացումը Բաժնետերերի տարեկան Ընդհանուր Ժողովի հաստատմանը,

ը/ Ընկերության աուդիտ իրականացնող անձի վարձատրության չափի հաստատումը,

թ/ Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստում,

ժ/ Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով),

ժա/ Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի հետ կապված տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին որոշման ընդունումը,
ժբ/ առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը,
ժգ/ Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
ժդ/ իրականացնել օրենքով սահմանված այլ իրավասություններ:
8.2.6. Ընկերության Խորհրդի նիստերը հրավիրվում են նրա նախագահի կամ տեղակալի կողմից ոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ: Ընկերության Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):
8.2.7. Ընկերության Խորհրդի նիստերը գումարվում են Ընկերության Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ Ընկերության Խորհրդի անդամի, Վերստուգիչ Հանձնաժողովի կամ Ընկերության Գործադիր տնօրենի պահանջով: Ընկերության Խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին: Ընկերության Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Կողմ և դեմ քվեարկած ձայների հավասար քանակության դեպքում Ընկերության Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք: Ընկերության Խորհրդի բացառիկ իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

8.3. Ընկերության Խորհրդի Նախագահը.

- Ընտրվում է Ընկերության Խորհրդի անդամների կողմից, Խորհրդի անդամների կազմից իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ,
- Կազմակերպում է Ընկերության Խորհրդի աշխատանքները,
- Գումարում և նախագահում է Ընկերության Խորհրդի նիստերը,
- Կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը,
- Նախագահում է Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր Ժողովում,
- Կնքում է պայմանագրեր Ընկերության Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի հետ:

8.3.1. Ընկերության Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Ընկերության Խորհրդի որոշմամբ կատարում է Ընկերության Խորհրդի անդամներից մեկը: Ընկերության Խորհրդի գործունեությունն իրականացվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

8.4. Ընկերության Գործադիր տնօրենը.

- Տնօրինում է Ընկերության գույքը՝ այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կնքում Ընկերության անունից,
- Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- Առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- Տալիս է լիազորագրեր,
- Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր՝ այդ թվում աշխատանքային,
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

- Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Ընկերության աշխատակիցներին,
- Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- Լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում է այլ գործառույթներ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

9.1. Ընկերությունում կարող է ձևավորվել վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող):

9.2. Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Ժողովի որոշմամբ:

9.3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովը՝

- Ընկերությունում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,
- Ընկերության Ժողովին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին Ընկերության գործունեության համապատասխանության մասին,
- Եզրակացություն է տալիս Ընկերության Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
- Իրականացնում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

9.4. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն 4 անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության Խորհրդի կամ Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի առնվազն երկու անդամի պահանջով:

9.5. Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովն Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմում է եզրակացություն և վերջինս ներկայացնում է Ընկերության Բաժնետերերի Ընդհանուր տարեկան Ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի եզրակացությունը պարտադիր է:

9.6. Վերստուգիչ հանձնաժողովը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվությունների համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված այլ տեղեկատվություններ:

9.7. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումն ու ստուգումը կատարվում է ինչպես Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովի սեփական

նախաձեռնությամբ, ցանկացած ժամանակ, այնպես էլ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի, Խորհրդի, ինչպես նաև քվեարկող բաժնետոմսերի 10% և ավելի բաժնետերերի պահանջով:
9.8. Վերստուգման արդյունքներից ելնելով՝ Ընկերության Վերստուգիչ Հանձնաժողովն իրավունք ունի պահանջել Ընկերության Բաժնետերերի արտահերթ Ժողովի, Ընկերության Խորհրդի արտահերթ նիստի հրավիրում:
9.9. Վերստուգիչ Հանձնաժողովն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Ժողովին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:
9.10. Յուրաքանչյուր տարի Ընկերությունը ստուգվում է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Անկախ աուդիտորական կազմակերպությանը նշանակում է Ընկերությունը: Ընկերությունը պարտավոր է անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ընկերությունն իր հաշվապահական հաշվառումը վարում է կետրոնական բանկի և ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
10.2. Ընկերության գործունեության արդյունքները արտացոլվում են Ընկերության հաշվապահական հաշվետվություններում, որոնք ներկայացվում են հարկային և պետական այլ մարմիններին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:
10.3. Ընկերության գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշ-վապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կենտրոնական բանկին և պետական կառավարման այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքներին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:
10.4. Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:
10.5. Ընկերությունը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև ամփոփ աուդիտորական եզրակացությունը:
10.6. Ընկերությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:
10.7. Ընկերությունը պարտավոր է պարբերաբար հրապարակել իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և հաճախականությամբ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

11.1. Ընկերության գլխավոր հաշվապահը (այսուհետ՝ Գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքներն ու պարտականությունները:
11.2. Գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընկերության Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:
11.3. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր Ժողովին, Խորհրդին, Գործադիր տնօրենին, Վերստուգիչ հանձնաժողովին կամ այլ անձի:
11.4. Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Ընկերության Խորհրդին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
11.5. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:
11.6. Խորհրդին ներկայացված հաշվետվությունների և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում՝ գլխավոր հաշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Ընկերության աշխատակիցներին, որոնք անմիջականորեն մասնակցել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության պատրաստման աշխատանքներին, և առաջարկում է լուծման միջոցներ դրանք ապագայում չկրկնելու կամ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ:

Եթե նման դեպքերը կրում են պարբերական բնույթ, ապա Խորհուրդը հարց է բարձրացնում գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանության հարցը քննարկելու մասին:
11.7. Գլխավոր հաշվապահը ՀՀ օրենքներով սահմանված կարգով և իր կողմից կնքված «Լրիվ նյութական պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների կամ անգործության հետևանքով Ընկերությանը պատճառված վնասների համար:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

12.1. Ընկերության գործունեությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում՝ լուծարման միջոցով:
12.2. Ընկերության լուծարումը տեղի է ունենում հետևյալ դեպքերում.
ա/ լիցենզիան անվավեր ճանաչելու,
բ/ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու,
գ/ ընկերության ինքնալուծարման,
դ/ օրենքով նախատեսված այլ հիմքերով՝ դատարանի վճռի հիման վրա:
12.3. Ընկերության ինքնալուծարման մասին որոշումը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն ընդունում և ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար դիմում է ՀՀ կենտրոնական բանկ՝ կցելով ինքնալուծարումը հիմնավորող փաստաթղթեր,

որոնց ցանկը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը: ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից ընդունված լուծարման նախագիծը ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի հաստատմանը: Այդ նախագիծը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց հետո սկսվում է Ընկերության լուծարման ընթացակարգը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

12.4. Ընկերության լուծարման դեպքում նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Ընկերության գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Ընկերության պարտատերերի պահանջների բավարարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ մնացած մասով բաշխվում է ընկերության բաժնետերերի միջև՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:

12.5. Ընկերությունը համարվում է լուծարված, լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատելուց հետո:

12.6. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից: